սրբոց Դարագոսի, Պրաբոսի, Անդրոնիկոսի, յիշեցէք զտրուպ գրողս Պետրոս Թորոս։

Կազմեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ մեղսամած Սարգսի ի գառն եւ նեղ ժամանակիս զի այսմ ամի եկն Սուլթն Թագաւոր Փարոս կղզւոյն ի յԱյասս եւ փախստական եղեն այլազգիք եւ ժողովեալ գժողովուրդն ... պատառած (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Պր. Գեղամ Կարապետեանէ)։

47. ՄԻԱԿԵՑԵՐ ՎԱՆՔԸ [13]

Ակներէ եւ Խորին անապատի մօտերը։ Շինուած է Կոստանդին Թագաւորապօրմէն։ Դրուած է Ս. Աստուածածնի եւ Ս. Կարապետի հովանաւորութեան տակ։ Առաջնորդներէն՝ Սահմանոս կը մանակցի Սիսի 1342ի ժողովին (Ալիշան, Սիսուան, էջ 66 եւ 153· Ջամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 261 եւ 342· Պալճեան Հ. Ա., Պատմ. կաթ. վարդապետութեան ի Հայս, էջ 174, Սահմանոս Հայր վանից Միակեցերոյ)։

Հոս 1313ին կը գրուի Աւետարան մը, որուն յիշատակագրութիւնն է.

«ի Զ.երորդի Կ.երորդի երկրորդի (1313) Թուարերութեան տումարի Հայոց յառաջնորդութեան տէր Կոստանդնի եւ թագաւորութեան Կիլիկեցւոց Նահանգիս Աչէնի, ես կարապետս նուաստս եւ յետինս յորդիս եկեղեցւոյ, հանդերձ հարազատ եղբարբ իմով Թորոս քահանայիւ, ցանկացաւղ եղաք այսմ լուսապեղծ եւ կենսակիր քառաջահեան մշտալոյս բանից տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աւետեաց աւետարանիս եւ սատարք զսա ի վայելումն անճանց եւ ի յիշատակ հոգւոց մերոց եւ ծնողաց։ Մանաւանդ զդծաւղ աւրինակիս եւ զհանճարեղ գրիչն Ռըստակէս յիշեսջիք։ Գրեցաւ սա ի սուրբ ուխտս, որ կոչի Միակեցեր ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ կարապետիս. եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս» (Սարգիսեան, Մայր Ցուցակ, Ա., էջ 708 եւ Խաչիկեան, Ժդ. դարի հայ· Ձեռ. Յիշատակարաններ, էջ 98)։

(Շարունակելի։)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

[13] Կասկածելի է Quessedam որ հայերէնի լաւ թարգմանութիւն մը չէ։

## ՅՈՒՅՑ ՀՑՑԵՐԷՆ ՉԵՒՐԳՐՑԱ ՆԻԿՈՄԻՑԱՑԻ Ի ԿԻԳՐՈՍ

ՑՑԺ՝ ՓՈԽՑԳՐՈՒԹՑԱ ՆԹԻԼԻՑՍ, ԿՐԹՈՂԻԿՈՍՐՑՆ

(Շարունակութիւն։)

### 37.

### ԱԻԵՏԱՐԱՆ

Հին Թ. 15։ ԺԴ. դար։

ԹՈՒՂԹՔ՝ 268։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,6×16 հմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ։ — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1 (մէկ ալ թղթեայ)։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ. տեղ տեղ ցեցակեր, տեղ տեղ ալ ինկած թղթերը լրացուած նորագրէն, որմէ են 264 եւ 265 թուղթերը։ Դատարկ՝ 1, 88բ, 89ա, 146ա, 221բ, 222ա։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԽՈՐԱՆ՝ չկայ։ — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ 2ա, 90ա, 147ա, 223ա։ — ՆԿԱՐ՝ 89բ։ 146բ, 222բ։ — ԶԱՐԴԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴ՝ յաջախ։ Ամբողջը յաջող ձկաբչի գործ։ — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԴ. դաշ։ — ՏԵՂԻ եւ ԳՐԻՉ՝ աձնաձիօր։

Մատեանս է Աւետարան չորս մասերով, որոնք են.

1· Թղ· 2ա—88ա Մատթէոս։
2· Թղ· 90ա—145բ Մարկոս։
3· Թղ· 147ա—221ա Ղուկաս։
4· Թղ· 223ա—268ա Յովհաննէս։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Թղ. 221ա· Փառք... Եւ կիրակոս սարկաւագս եւ մայրն իմ Սառան, որ սատաքաք ըզսուրբ աւետարանս յիշատակ մեզ եւ մեր ննջեցելոցն. այլ որ յիշէ սրտի մտաւք եւ ողորմի ասէ, նայ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յաւիտեանս. ամէն։

Պահպանակ 1· Թղթեայ միջին մեծաքան երկաթագիր· բովանդակութիւնը՝ վկայաբանական հատակոտոր· ||| քթթել ական բղխեցին երկինք ի վերուստ գայլ քաղցրութեան իջեալ ի Տեառնէ. մինչեւ լնուլ առ հասարակ ջրհղեղք եւ ջրակոծ ամենայն. եւ ուրախացեալք սրտիւ հաւատացին Յաստուած ի փոքունց մինչեւ ցմեծս մեծս. նաեւ քուրմքն սպասաւորք կուռացն եւ պաշտաւնատարք դիւացն, բայց ի քրմապետէ անտի, զի ոչ հաւատաց յԱստուած կենդանի։ Եւ ասէ երանելին. Եթէ քրմապետն ձեր ոչ հաւ(ատացէ) յԱստուած, ոչ դաղարեսցէ անձրեւս. եւ լուեալ նոցա՝ ասեն ցքրմապետն. Եթէ ոչ հաւատացես յԱստուածն, յոր մէք հաւատացաք, կատարմամբ արարեալ զքեզ եւ զընդանիս քո բարձցուք ի կենաց. զոր ոչ եւ միով իւրք կարէին հաւանեցուցանել բանիւ։ Արդ մինչդեռ յայսմ (մա)ց խորհրդի ե(ին) վարա(ն)եալք ընդ միմեանս. եւ ահա երկաքանչիւր դասերք քրմապետին կոյսք, հարեալք յայտոց պային ընդ մէջ քաղաքին. կապուտ կողպուտ յարակս նախատանաց. քանզելով զմարմինս սատամամբ· աղաղակէին մեծաձայնապէս ի լուր ամենեցուն եւ ասէին. Ձի՞ կամ է՞ր եւ զրկիսոս ծառայդ Աստուծոյ բարձրելոյ եկիր տարաժամ հալածել (՞) զմեզ ի քաղաքես մերմէ։

Իսկ քրմապետն տեսեալ զայսոսիկ եւ լուեալ կականալիր ողովք անդեալ առ ոտս սրբոյն՝ լայր զառնապէս, աղաղակեր եւ ասէր. Ողորմեաց ինձ, Սուրբդ Աստուծոյ· ընդ նմին եւ ամենայն ժողովք նոցա հաւատացեալոցն. աղաչէին զերանելին վասն բժշկութեան նոցա։ Իսկ սրբոյն հրամեալ քրմապետն զի նախ ինքեան ձեռաւք մանրեսցէ պատակերս կռոցն. եւ ապա սկիզբն արասցէ բարեպաշտութեան հաւատոց, որով եւ բժշկութիւն ընկալցի հաւատով զտաերացն. կարող եմք, ասէ, զաւրութեամբն Աստուծոյ եւ բանիւ զայս հրաշագործել· այլ զի վկայեցին եւ ձեռք ||||||||||||||||| եւ երբեւ կատարեցաւ հրամայեալն սրբոյն, սատեալ այնուհետեւ այսոյն պղծոյ ելանել ի կուռացն անտի. եւ հալածեալք անդուստ արտաքոյ լինել յանբնակ կղզիս հեռաւորս. եւ անդէն եղեալ աներեւոյթ փախեան ի սահմանաց նոցա նոցա։

Դաղարեցին անդէն եւ անկարգ բղխումն անձրեւայն հոսմանց, մկրտեցան ի նոցունց եւ ի նոցին իսկ դասք հաւատացելոց յանուն Տեառն եւ որդւոյ եւ եւ հոգւոյն սրբոյ. եւ եղեւ ուրախութիւն մեծ. ոչ միայն երկրաւորացս այլ եւ անմարմնոցն դասուց. եւ յանձն արարեալ վնոսա չնորհացն Աստուծոյ. եւ ինքեանք յարուցեալք հանդերձէին զառաջի եղեալն վճարել զճան ||||||||||||||| սուրբ ||||||| ննիկականն. կատարէին որ անդանաւր (?) ղերութիւնք. եւ անդրադարձեալ իջին ի Թեբայիթ. եւ ժամանեալ էջ ի գետդ ինչ անապանելոց եւ <աւ>թեվանս առնէին. իսկ սիրականի գեղջն բարէբարոյ գոլոյ եւ երկիւղած ի Տեառնէ ըն(թաց)եալ ընդառաջ երկրպագ ||||։

2· Բոլորգիր մագաղաթեայ պահպանակը կը բովանդակէ ճաչոցէ մասեր։

### 38.

### ԱԻԵՏԱՐԱՆ

Հին Թիւ 24։ ՌՃԻԹ = 1674։

ԹՈՒՂԹՔ՝ 301։ — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19,1×13,9 հմ.։ — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն։ — ՆԻՒԹ՝ թուղթ։ — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ։ — ՄԱԳԱՂ. ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ։ — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ։ — ԴԱՏԱՐԿ՝ Թղ. 1—5, 88բ, 140բ, 229բ, 298բ—301բ։ — ԳԻՐ՝ բոլորգիր։ — ԽՈՐԱՆ՝ չունի։ — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ 6ա, 89ա, 141ա, 230ա։ — ՆԿԱՐ՝ չունի։ — ԶԱՐԴԱԳԻՐՔ, ԼՈՒՍԱՆՑԱՁԱՐԴ՝ ինչպէս եւ կիսախորանաձ աձնաձիօր։ — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կաթմիր։ — ԺԱՄԱՆԱԿ՝ 1674։ — ՏԵՂԻ՝ կիպրոս, — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս երէց (Փոլոսցի)։

Մատեանս է Աւետարան չորս մասերով, որոնք են.

1· Թղ· 6ա—88ա· Մատթէոս։
2· Թղ· 39ա—140ա· Մարկոս։
3· Թղ· 141ա—229ա· Ղուկաս։
4· Թղ· 230ա—296ա· Յովհաննէս։

ԳԼԽԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ Թղ· 296ա· «Փառք... Աւարտեցաւ եւաւհրաչ եւ հոգեշահ Աւետարանս... յիշեսջիք ի մգլուպարդ Աւետարանս... յիշեսջիք ի քրափայլ յաղաւթս ձեր զմեղսամած գրիչս զՍտեփաննոս երէցս եւ զծնողսդ իմ զիարդամ եւ զՇենֆորն. եւ այլ զամենայն յարեան մերձաւորք· ամէն։ Եւ զարձեալ յիշեսջիք ի Քրիստոս Աստուած զատացող սուրբ Աւետարանս զայս (զատարկ) կուսակրաւն քահանիս զտէր... (զատարկ) հանայ, որ բազում աշխատութեամբ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց։

Արդ յանդ ելեալ աւարտեցաւ քառահոս եւ քառավառակ եւ փառաբուղխ սուրբ Աւետարանս ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաւքաւչայ, ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սարգսի զաւրավարին եւ սուրբ Մարկոսի Աստուածաբանին կարայ անապ(աս)իս ձեռամբ յոչնամեղ եւ տարտամ ոգւոյ Ստեփաննոս երէցու է թվին 1674։ — Հայոց ՌՃԻԹ (1674) ամին ի կաթողիկոսութեան Տէր Յովհաննէս Ա. Արդ աղաթեան կիւրիկեցւոց Խաչատուրի։ Արդ աղաչեմ զամենեսեան, զոր հանդիպիք այսմ սուրբ Աւետարանի, յիշեսջիկ աղաւթիւք ի Քրիստոս զգրողս եւ ստացող սորայ զառաքինատոս զգրողս... (զատարկ)։ Հրատ. Բանի միայնականն...





© National Library of Armenia

*կուբան, էջ 99. եւ Կիւլէսէրեան, Պատմ. կաթողիկոսաց, 410:*

*2. Թղ. 299բ. «Սարգիս Վարդես Կիպրոսս կարդար»: Եւ այլ ձարտուքներ:*

## 39.

## ԱԻԵՏԱՐԱՆ

Հին Թ. 33: Ռճիե=1676:

Թուխ. 266: — Մեծութիւն՝ 20,2×14,1 հմ.: — Գրութիւն՝ երկսիւն: — Նիւթ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Մագաղ. պաչպանակ՝ չկայ: — Հանգամանք՝ լաւ, թեթեւ խոնաւութիւն կրած: — Դասակարգ՝ բդ. 1—4 (գրչափորձեր), 78բ, 263—266: — Գիր՝ բոլորգիր: — Ներկ՝ կիսագոյն, նկար՝ չկան: — Զարդագիրք՝ ամենաշատ: — Լուսանցազարդ՝ չկայ: — Նորագիրք՝ կարմիր: — Ժամանակ՝ 1676: — Տեղի՝ կիպրոս, Լեւիզոչէ: — Գրիչ՝ Ստեփաննոս:

*Մատեանս է Աւետարան. ուր կան՝*

*1. Թղ. 5—78ա. Մատթէոս:*
*2. Թղ. 79—125բ. Մարկոս:*
*3. Թղ. 126—203բ. Ղուկաս:*
*4. Թղ. 204—261ա. Յովհաննէս:*

*Կիսախարաններու համար Թողուած են բաց տեղեր, բայց չեն նկարուած:*

*Յիշատակագրութիւնք: 1. Թղ. 261ա. Փառք ամենասուրբ Եռանձնեայ եւ միանամեան սուրբ Երրորդութեանն Հաւր եւ Ուղղոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ...:*

*Արդ անկեալ աւարառեցաւ քառահոս եւ քառավտակ եւ քառաբուղխ սուրբ Աւետարանս ի յերկիրն Կիպրոսի ի քաղաքն Լէվքաւչէ, ընդ հովանեաւ սրբուհի ամէնաւրհնեալ Աստուածածնին եւ սուրբ Սարգսի զաւրավարին, ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ Սահփանոսի գրչի, որ է յերկրէն Գերմանիկոս որ կոչի Մարաշ, ի թվին Հայոց Ռճիե (1676) ամին. ի կաթողիկոսութեան Կիլիկեցւոց տեառն Սահակայ եւ բանակալութեան ||| (2 տող քերուած, անընթեռնելի):*

*2. Թղ. 261բ (Այլ գրչէ) Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս զվանդի քերիչդի խիղճն, որ առաջաւ գտուրբ Աւետարանս իւր հալալ վաստակոցն եւ եղ յիշատակ իւր ծնողացն Իսկենտէրին եւ մօրն Շահզատէին հոգւոյն. Աստուած զնոր յիշատակն աւրհնութեամբ պահեսցէ. ամէն: Հայր մեր որ:*

*Թ. 1 եւ 2 Թիչատակարանները քաղուածաբար հրատ. ԲՄԿ, 196:*

## 40.

## ԱԻԵՏԱՐԱՆ

Հին Թ. 23: 1677:

Թուխ. 267: — Մեծութիւն՝ 20×14,3: Գրութիւն՝ երկսիւն: — Նիւթ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Մագաղ. պաչպանակ՝ չկայ: — Հանգամանք՝ շատ գեղակեր եւ կազմալոյծ: — Դասակարգ՝ 204բ, 267աբ: — Գիր՝ բոլորգիր: — Խորան՝ չկայ: — Կիսանկարներ՝ 1ա, 76ա, 123ա, 205ա: — Նկար՝ չունի: — Զարդագիրք՝ ինչպէս նաեւ կիսախորաճիւ շատ անվարժ վրձինով: — Լուսանցազարդ՝ չկան: — Նորագիրք՝ կարմիր: — Ժամանակ՝ 1677: — Տեղի՝ կիպրոս, Լեւիզոչէ: — Գրիչ՝ Ստեփաննոս Ֆռնոսցի:

*Մատեանս է Աւետարան.*

*1. Թղ. 1—75բ. Մատթէոս:*
*2. Թղ. 76բ—122. Մարկոս:*
*3. Թղ. 123—204ա. Ղուկաս:*
*4. Թղ. 205ա—286բ. Յովհաննէս:*

*Գլխաւոր Յիշատակարան Թղ. 266ա՝ Փառք...: Արդ յանդ եղեալ աւարառեցօ քառահոս եւ քառավտակ եւ քառաբուղխ սուրբ Աւետարանս ի յերկիրն Կիպրոսի, ի քաղաքն Լաւքաւչէ, ընդ հովանեաւ սրբուհոյ ամէնաւրհնեալ Աստուածածնին, ձեռամբ յոգնամեղ եւ տարտամ յոգւոյ Սահփանոս զրչի, որ է նա երկրէն Մարաշու, ի գեղջէն Ֆռնոսաու, ի թվին Հայոց Ռճիջ (1677) ամին, ի կաթողիկոսութեան Կիլիկեցւոց տեառն Ագաբիայի եւ Սահակին: Եւ զարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աստուած զտատացող սուրբ աւ |||: Հրատ. ԲՄԿ, 197: Կիւլէսէրեան, Պատմ. 419:*

## 41.

## ԱԻԵՏԱՐԱՆԱՑՈՅՑ-ՏՕՆԱՑՈՅՑ

Հին Թ. 62: Ժէ. դար:

Թուխ. 100: — Մեծութիւն՝ 10,6×7,5 հմ.: — Գրութիւն՝ միասիւն: — Նիւթ՝ թուղթ: — Կազմ՝ տախտակեայ: — Մագաղ. պաչպանակ՝ չկայ: — Հանգամանք՝ շատ գեղակեր: — Գիր՝ նուրբագիր: — Կիսանկարներ՝ 2ա: — Նկար եւ նուրբագիր: — Նորագիրք՝ կարմիր: — Ժամանակ՝ Ժէ: — Տեղի եւ գրիչ՝ անծանօթ:

*Մատեանս է Աւետարանացոյց–Տօնացոյց: Կը սկսի. Աստուածայայտնութեան ձրագալուցի ա. աւուր...:*

*Յիշատակագրութիւնք կը պակսին:*



## 42.

## ՄԱՇՏՈՑ

Հին Թ. 42: Ջժէ=1468:

Թուխ. 200: — Մեծութիւն՝ 18×13,2 հմ.: — Գրութիւն՝ մէասիւն: — Նիւթ՝ թուղթ: — Կազմ՝ կաշեպատ տախտակ: — Մագաղաթեայ պաչպանակ՝ չկայ: — Հանգամանք՝ շատ տեղ գեղակեր: — Գիր՝ բոլորգիր: — Խորան՝ չկայ: — Կիսանկարներ՝ 2ա, 18ա, 28բ (անիշատակ), 105ա, 114ա, 118ա, 132ա: — Նկար՝ չկայ: — Զարդագիրք՝ նուրբագիր: — Լուսանցազարդ՝ չկան: — Խորանագիրք՝ կարմիր: — Ժամանակ՝ 1468: — Տեղի՝ Խաբրեխ: — Գրիչ՝ Յակոբ Բահանայ:

*Մատեանս է Մաշտոց. ուր կան.*

*1. Թղ. 1ա. «Յանկ է սուրբ Գրոցս», Ա—իբ գլուխք:*

*2. Թղ. 1բ. Կանոնք Նաչ աւրհնելոյ: Բեւեռն ի դուռն եկեղեցւոյ. լուանան ջրով...:*

*3. Թղ. 8ա. Կանոնք Մկրտութիւն առնել:*

*4. Թղ. 28բ. Կանոնք յարժամ տղայ վախճանի:*

*5. Թղ. 42բ. Կանոնք զամենայն վախճանեալսն յուղարկել առ Քրիստոս:*

*ա. Թղ. 63բ. Գանձ ննջեցելոյ ասա: Մինդ ի յիչէն...:*

*բ. Թղ. 67ա. Ողբ ի վերայ ննջեցելոյն ասա: Գուչեմ առ ձեզ ողբերգական...: Տունք՝ Գէորգ վարդապետի բան ի բերանոյ մեռելոց:*

*գ. Թղ. 70ա (այլ գրչէ մինչեւ 103բ). Այսօր եհաս հրաման յարարչէն...:*

*դ. Թղ. 71ա. Տաղ մեռելի ի նաղաչիւ է: Անցանէ մեծութիւն...:*

*ե. Թղ. 74ա. (Ողբ) Այս իմ զօրաւոր բազկիս հէնց յուժով...:*

*զ. Թղ. 75ա. Ողբ. Ես գիտէի զաչխարհս ինձ մուտք է տըւած...:*

*է. Թղ. 77ա. Ողբ վասն Մանկանց ննջեցելոց (Նաղաչիւ): Արարիչն արարածոց մեզ բարկացաւ...:*

*ը. Թղ. 79բ. Ողբ մեռելի ճանփայ հայեցայ: Ինձ ու մէտ կայր...:*

*թ. Թղ. 80բ. Գանձ ի Յովանէս վարդապետէ աւացեալ վասն Տղայոց: Յանեղդ յհութեան, Լիկ անեղական...:*

*ժ. Թղ. 85ա. Ողբ Տղայոց ասա: Յարարչէն հրաման որդւոցս մարդկան...: Տունք՝ Յովանէս վրձէ լոկ վարդապետէ:*

*ժա. Թղ. 87ա. Ողբ Տղայոց յորդորակ ասա: Ով գեղեցիկ եւ նազելի եւ ոսկեհատ յոյժ ցանկալի...:*

*ժբ. Թղ. 89ա. Ողբ Տղայոց ննջեցելոց ասացեալ անոյշ եւ գեղեցիկ: Աստուած քաղցեաց եւ խրատ եառուր...:*

*ժգ. Թղ. 90ա. Ողբ վասն ննջեցելոց ասացեալ: Եկայք այսաւր եղբարք ամէն...: Տունք՝ Երզ Արխատակէսի:*

*ժդ. Թղ. 91բ. Ողբ վասն ննջեցելոց ասա: Ով քահանայք եւ վարդապետք...:*

*ժե. Թղ. 93ա. Ողբ անոյշ եւ գեղեցիկ ի վերայ մեռելի ասա: Ամենայն վաղք մարդոյ դառնարկ եւ ունայն...: Տունք՝ Ա—ԲՖ:*

*ժզ. Թղ. 96ա. Ողբ վասն հոգւոյ եւ մարմնոյ: Ցառաչն որ յաչխարհս եկիր...:*

*ժէ. Թղ. 97ա. Տաղ Բ. կիրակէին յԱնապատակ որդւոյն. ի Մերենց Գրիգորէ ասացեալ: Ան հայրդ աղաղակեմ...:*

*ժը. Թղ. 98ա. Ի տէր ներսէհ ասացեալ: Չեռեւեցայ անառակին...:*

*ժթ. Թղ. 99ա. Տաղ Մեծատանն եւ Ղազարու: Լաչ գմեծատանն...:*

*ի. Թղ. 100բ. Տաղ սակս հոգւոյ եւ մարմնոյ: Այրէն մինչեւ ի Քէն Քրիստոս մեծարեալ գայ քեզ, բիւրապատիկ մեզաւք ապաւեցայ ես...: Տունք՝ «Ա—Ֆ»:*

*իա. Թղ. 101բ. Տաղ վասն Մնընդհանն Յովհաննու: Յովհաննէս մեծ մարգարէ...: Վ. Մաքին Մինասն ասաց եղբարք լսեցէք...:*

*իբ. Թղ. 103ա. Տաղ պահաւ: Ամենաքաղցր Տէր Թագաւոր... (վերջը պակաս):*

*6. Թղ. 104բ. Կանոն պահաւ աւրհնելոյ: Տանի քահանայն ի դուռն...:*

*7. Թղ. 105ա. Կանոնք պահաւ առնելոյ:*

*8. Թղ. 114ա. Կանոնք Հազորդ տալոյ:*

*9. Թղ. 118ա. Կանոնք Ողջհանգիստ առնելոյ:*

*10. Թղ. 121ա. Աւրհնութիւն Հատիկ մեռելոց: (Ազօթք) Գոհանամք եւ փառաբանեմք...:*

*11. Թղ. 124ա. Աւրհնութիւն Ագի:*

*12. Թղ. 124բ. Կանոնք Տեառնականի:*

*13. Թղ. 130բ. Աւրհնութիւն Սեզանոյ Տեառնականի:*

*14. Թղ. 131ա. Աւրհնութիւն Հատի մարմրոսոյ:*

*15. Թղ. 132ա. Կանոնք Ջուր աւրհնելոյ յաւուր Յայտնութեանն:*

*16. Թղ. 145բ. Քարոզ Պատարիքանին:*

© National Library of Armenia

17· Թղ· 151ա. Կանոնն Մեծի Հինգշաբաթին Ոտնալուացին:

ա· Թղ· 159ա. Գանձ: Անտանաւը յայտնի աղէտն արարչի···:

18· Թղ· 166բ. Կանոնն զԱբմախս աւրհնել, Շեղջ եւ Հնծան:

19· Թղ· 169ա. Կանոնն Հաչլուայ առնել:

20· Թղ· 172ա. Կանոնն Հանդերձեղէնն սպաս աւրհնել:

21· Թղ· 172բ. Կանոնն Սկի եւ Մաղմայ աւրհնել:

22· Թղ· 173բ. Կանոնն զնկարեալ եկեղեցի աւրհնել:

23· Թղ· 174ա. Կանոնն Աւազան աւրհնել:

24· Թղ· 178ա. Կանոնն Նաւակատեաց եկեղեցւոյ պղծելոյ յանաւրինաց եւ չարժեալ սեղան վերստին հաստատել:

25· Թղ· 195ա. Հանգստեան Աւետարան: Թղ· 198 եւ 199ի մէջ թղթեր լնկած:

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1· Թղ· 199ա (Գլխաւոր յիշատակարան, որուն սկիզբն լնկած է նախորդ թղթին հետ. այժմ կը չարունակուի). ||| Ընթեռնոյք եւ այք լսէքդ, մեղաց թողուլթիւն հայցեցէք ի Քրիստոսէ Մարտիրոս քահանային եւ ամենեցուն որ վերոյ գրեցան ի սմա: Կատարեցաւ Մաշտոցս ի թվ· ՋԺէ (1468) ձեռամբ բազմամեղ եւ անարժան քահանային Յակոբայ, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զաւրավարին եւ որդոյ նորա Մարտիրոսի, ի թաղս (որ) կոչի Սենամուտ, ի քաղաքիս Խարբերդ, ի կաթողիկոսութիւնն տեառն Աբրահամիսի եւ յեպիսկոպոսութիւնն տէր Սիմէոնի եւ տէր Աստքելի: Արդ աղաչեմ զձեզ զամենեսեան, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զպարոն Թամուրն եւ իւր կողակիցն Գոհարն եւ մեծ որդին Յակոբն, Վարդան, Հապիսն ու Նազքարն եւ դստերքն Բաղիատան, Մանանայն, Սոզոմէ, Մարիամն, Հէրիքէն. (որ) ոք յիշէ եւ ողորմի ասէ, Աստուած իւրն ողորմեսցի ի միւոյանգամ գալըստեանն. ամէն: — Ե(ւ) գնեցաւ ի թվակ(անին) Ռ. (1551). Եւտուն ի ձեռն գեղապրուս սարկաւագի Քրմանին, ի հայրապետութիւն տէր Պողոսին, ի քահանայութիւն տէր ըՍահեփանոսին (այլ գրչէ) եւ տէր Մարտիրոսին եւ տէր Սարգիսին: (Կից կայ երրորդ գրչէ երեք տող, այժմ անընթեռնելի):

6· Թղ· 200ա. (Թղթեայ պահպանակ) Զարմապանին թվին ՌՃԲ (1653):

7· Թղ· 200ա (այլ գրչէ). Թվին Հայոց ՌՄԼԷ (1788) եւ օգոստոսի Լ:

8· Թղ· 200ա եւ բ· անվարժ ձեռքէ երկու մարդկապէմ գծագրական վարժեր:

9· Թղ· 66բ (շղագիր, յետնագոյն անվարժ գրչէ մը). Յիշատակաւ մահտեսի Յովակիմեան մահտեսի Մ(ո)ակաեսի ի բարին· ամէն:

## 43.

## ՄԱՇՏՈՑ-ԳԱՆՁԱՐԱՆ

Հին Թ· 39: ԺԵ· դար:

ԹՈՒՂԹՔ՝ 182: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18×13,2 սմ·: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ՆԻՒԹ՝ բուղբ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գործածուքենէ եւ խոնաւուքենէ վնասուած: — ԴԱՏԱՐԿ՝ 128ք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱԽՈՐԱՆ, ՆԿԱՐ՝ չունի: — ՋԱՐԴԱԳԻՐՔ՝ ցանցառ: — ԼՈՒՍԱՆՑԱՋԱՐԴՔ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ· դար: — ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻՉ՝ անծանօթ:

Մատեանս է Մաշտոց, ուր կայ նաեւ Գանձարան:

Ա· 1· Թղ· 1ա—25ա. Կանոն Աչխարհաթաղի, սկիզբը պակաս:

2· Թղ· 25ա. Կանոն Տեառնական աւրհնելոյ:



3· Թղ· 30ա. Աւրհնութիւն Ալի:

4· Թղ· 31ա. Աւրհնութիւն Սեղանոյ Տեառնականի:

5· Թղ· 33ա. Կանոն Ոգեհանգիստ առնել կամ պատարագ մեռելոյ:

6· Թղ· 38ա. Աւրհնութիւն Հատի եւ Բաժակի: (Ալ·) Գոհանամք եւ փառաւորեմք···:

7· Թղ· 41ա. Աւրհնութիւն Հատի Մարտիրոսաց: (Ալ·) Աւրհնեալ ||| Տէր Աստուած արարիչ···:

8· Թղ· 42բ. Կանոն յարժամ Դուռն պնին եկեղեցւոյ:

9· Թղ· 43բ. Կանոն Աւազան աւրհնելոյ:

10· Թղ· 47բ. Կանոն Նկար եկեղեցւոյ աւրհնելոյ:

11· Թղ· 48ա. Կանոն Սկի եւ Մաղմա աւրհնելոյ:

12· Թղ· 48բ. Կանոն Նորակերտ գիրք աւրհնելոյ:

13· Թղ· 50ա. Կանոն Հանդերձեղէնն սպաս աւրհնելոյ:

14· Թղ· 50բ. Կանոն Ժամահար աւրհնելոյ:

15· Թղ· 52բ. Կանոն Ճաչ աւրհնելոյ:

16· Թղ· 71ա. Կանոն Ջուր աւրհնելոյ Յայտնութեան Տեառն: Այս կանոնին մէջ Թղ· 75ա. Աղաւթք զոր ասացեալ է սուրբ Բարսղի կեսարացւոյ կաթողիկոսի: Աւրհնեալ եւ Տէր Աստուած···:

17· Թղ· 85բ. Կանոն եկեղեցւոյ չարժեալ զսեղանն պղծելոյ յանաւրինաց վերստին հաստատել:

18· Թղ· 101բ. Կանոն զԱպաչխարողն առնել:

19· Թղ· 107բ. Կանոն զԱպաչխարողն արձակելոյ:

20· Թղ· 120բ. Կանոն զԱբմախս սերմանց աւրհնել եւ զՇեղջ:

21· Թղ· 123բ. Կանոն Հնձան աւրհնել:

22· Թղ· 124բ. Գանձ Հանդստեան ՆՆջեցելոց: Մինն ի յէն···:

Մաան Բ. Գանձարան: ա· Թղ· 128ա. Յաւաջարանութիւն զրոցս որ ըստ համարոյ ցուցանէ կարգաւ զԳանձ եւ զՏաղ եւ զամենայն ինչ· Ա—ԺԱ:

բ· Թղ· 129ա—130բ. Համարք Ա—ՃԺԹ:

1· Թղ· 131ա. Գանձ Յովակիմայ եւ Աննայ ծնողաց: Գոյին անեղին···: «Գրիգոր է սա»:

2· Թղ· 133բ. Գանձ Աւետեաց Ս· Աստուածածնին: Խնդութեան ձայն···: «Հաչատուր»:

3· Թղ· 137ա. Գանձ Ծնընդեան ի Յայտ· Հոգւոյն փառաց···: «Հաչատուր»:

ա· Թղ· 140ա. Մեղեդի անոյշ Սրբիկ Կոստան·: Կոյս անապական եւ անախտ···:

4· Թղ· 140բ. Գանձ Բ· աւուր Յայտ·: Մաքուր եւ ամբիծ···: «Մկրտիչ»:

ա· Թղ· 143բ. Տաղ անոյշ ի Սրբիկ Կոստանդիէ: Բրիստոս բանըդ հօր···:

5· Թղ· 144բ. Գանձ Գ· աւուր Ծն·: Տարփուն ըղձական···: «Տէր Մխիթարա»:

ա· Թղ· 149ա. Մեղեդի անոյշ ի Պլուզ վարդապետէ: Յանեղական լուսոյ···:

բ· Թղ· 149ա. Տաղ գեղեցիկ Կոստան(դ)էն: Հրճուխմբ այսօր···:

գ· Թղ· 150ա. Ի սրբոյն Գրիգորէ Նարեկացւոյ: Աւետիս մեծ խորհրդոյ···:

6· Թղ· 150բ. Գանձ Գ· աւուր Ծն·: Յանեղական լուսոյն···: «Յովանէս»:

ա· Թղ· 152բ. Տաղ ի Գրիգորէ Նարեկացւոյ: Աչքն ծով է ծով···:

բ· Թղ· 152բ. Տաղ ի Սրբիկ Կոստանդէ: Կայր կայն է յայրին···:

գ· Թղ· 153բ. Այս Պլզոյն է Յովաննէս վարդապետէն: Առաջնաճաշակ պաղոյն···: «Ա—Բ»:

դ· Թղ· 154բ. Յորդորակ է: Աստուածածնէն մայր լուսոյ տաճար բանին Աստուծոյ···: «Ա—Ժ»:

7· Թղ· 155ա. Գանձ Ե· աւուր Ծն·: Ինդա խորան···: «Հաչատուր»:

ա· Թղ· 157ա. Տաղ անուչ: Աստուածածնին զոյ կամար հրեղէն ծովուն մեզ համար···:

8· Թղ· 157բ. Գանձ Զ· աւուր Ծն·: Գուչունն ըղձագին···: «Գրիգոր»:

9· Թղ· 160ա. Այլ Գանձ Տեառնընդառաջին: Միասնական սուրբ երրորդութիւն···:

«Մկրտիչ»:

ա· Թղ· 162ա. Տաղ Գալատեան: Քրիստոս վառաց թագաւոր···:

10· Թղ· 163ա. Գանձ Գալատեան: Գովեալ եւ աւրհնեալ···: «Գրիգոր»:

ա· Թղ· 165բ. Յորդորակ: Այսօր ցնծայ երուսաղէմ···:

11· Թղ· 166ա. Գանձ Յովհաննու Մկրտչի: Մեծապայծառ փառօք···: «Մկըրտիչ»:

© National Library of Armenia

ա· Թղ· 168բ· Մեղեդի Յովհաննու· Քեզ մատուցանեմք այսօր...:

բ· Թղ· 169բ· Փոխէ զձայն: Անմարմնոցն հրեղինաց...: «Ա—Լ»:

12· Թղ· 169ա· Գանձ Պետրոսի Հայրապետի ի տէր Մխիթարայ: Վերերգեմք ընդՀմանր...: «Վարդապետի»:

13· Թղ· 175ա· Գանձ Ս· Ձգնաւորաց: Բարձրեալ Հաւատոր... (պակասաւոր· տունք՝ Բա առ· եղ):

ա· Թղ· 178բ· Տաղ Ս· Անտոնի: Անտոն ոստ անապատի...:

բ· — — (Յորդ·) Անճամբ խոնարհմէք...:

14· Թղ· 179ա· Գանձ Թագաւորացն սըրբոց: Համագոյական հաւր սահման եւ բան... (պակասաւոր· այժմ տունք՝ Հիագ·է):

Թղ· 175—181· Թղթերու եռեւտաոյուԹիւն եւ անկումներ տեղի ունեցած:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ չկան թղթերու անկումի պատճառաւ:

## 44.

## ՄԱՇՏՈՑ ՔԱՀԱՆԱՅԱԹԱՊԻ

Հին Թ· 25: Ժե·/ԺԲ· դար:

ԹՈՒՂԹ՝ 140: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 25 × 14,4 սմ·: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ· ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆԴ՝ լաւ· Բգ· 1ա եւ 140 վնասուած: — ԳԻՐ՝ բալորգիր: — ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ Բգ· 1բ, 91ա, 99բ: — ՆԿԱՐ՝ չկայ: — ՁԱՐԴԱԳԻՐՔ ԵՒ ԼՈՒՍԱՆՑԱՆԱՐԴՔ՝ սակաւաթիւ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԹԱՄԱՆԱԿ՝ Ժե·/ԺԲ· դար: — ՏԵՂԻ՝ եղաճ (°) գիւղ: — ԳՐԻՉ՝ Յովհաննէս:

*Մատեանս է Մաշտոց, ուր կան·*

1· Թղ· 1ա—89բ· Կանոնք յորժամ եպիսկոպոս կամ էրէց կամ հայրապետ եւ կամ (ա)ն(ապա)ոի առաջնորդ կատարի մահուամբ, այս կարգաւորութիւն արասցեն լուացմանն (պ)ատանացն եւ այլ կանոնիեալ պայմանաւոր (կ)արգացն, զոր եդին սուրբ վարդապետքն մեր: Երթան նախ որ գհանգիստ պատրաստեն քահանայքն Ժողովրդեամբն հանդերձ եւ ասեն Սգմ· ՁՔ· ողբասգայն· Կցուրդ՝ Զգործս ձեռաց մերոց...:

ա· Թղ· 57ա· Հանգիստ սրբոյն Յոհաննու առաքելոյն եւ աւետարանչի· Էր ընդ եղբարս...:

բ· Թղ· 63բ· Աղաւթք կինքելոյ զգերեզմանին, զոր ասացեալ է տեառն Բարզոի հայրապետի կեսարու կապադովկա(ցւոց)· Գոհանամք զքէն Հայր...:

գ· Թղ· 67բ· Իսկ յերկրորդումն աւուր երթան ի հանգիստն...:

դ· Թղ· 73բ· Կանոնք Գ· աւուրն:

ե· Թղ· 74ա—75ա· Գրիգորի Աստուածաբանի ի բանէն որ ի մահն Մաքսիմիանոսի ուսումնական իւրոյ: Ով եղբայր սիրելի...:

զ· Թղ· 78ա—87բ· Կանոնք Դ·—Ի· աւուրն:

է· Թղ· 87բ—88բ· Եղիշէի վարդապետի ասացեալ: Ահեղ եւ զարմանալի է զալուստն Քրիստոսի եւ ահաւոր դատաստանն...: Վջ· որպէս լուսաւորք յարքայութեան երկնից:

ը· Թղ· 88բ—89բ· Ս· Թաթէոսի ասացեալ վասն ննջեցելոցն ի յարութեանն: Արդ հոգի ամենայն մարդոյ, որ ելանէ ի մարմնոյ անտի...: Վջ· եթէ եղիցին ամենեքեան ուսեալք Աստուծոյ:

2· Թղ· 90ա· Յոհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի ասացեալ վասն Հմնարկութեան սրբոյ յեկեղեցւոյ: Ժողովեալ աստուածայնոյ քահանայապետին...:

3· Թղ· 99բ· (Նաւակատիք եկեղեցւոյ): Իսկ Նաւակատեաց աւուրն յերեկաբերեայ հանգուցն լինի...:

4· Թղ· 122բ· Կանոնք Աւազան աւրհնելոյ:

5· Թղ· 127ա· Կանոնք նկարեալ եկեղեցին աւրհնել:

6· Թղ· 128բ· Կանոնք Նոր Դուռն հաստատելոյ:

7· Թղ· 129ա (չար· 134բ, 140ա—բ, 138ա) Կանոնք Նաւակատեաց յեկեղեցոյ պղծելոյ տաճարին եւ չարժեալ սեղանոյ, որ յանաւրինաց ոք մտեալ իցէ: Թղ· 134էն եաքը Թուղթ մ'ինկած:

8· Թղ· 136բ· Կանոնք զարմախս սերմանեաց աւրհնելոյ եւ զչեղջս աւրհնելոյ: Շարունակութիւնն Թղ· 136բ իջին՝ 135ա—138ա:

9· Թղ· 137բ· Կանոնք որ մարդ յանկարծակի պեղծ կերակուր ուտէ, թէ ոք ի քրմանոնէից Տաճկաց գեն կամ ի գոհից Հրէից եւ Հեթանոսաց (ուտէ):

10· Թղ· 139բ· Կանոնք Մրգաց: Թղթերու եռեւտաոյութիւն կայ 135—140 Թղթերու մէջ:



11· Թղ· 90բ նոր գրչէ· Կանոն հանգերձեղէն եւ սպաս օրհնելոյ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ: Թղ·1ա· Ո՛հ, ո՛հ, գմեղաւք զառածեալ Յովաննէս յաշխարհի էրէց· յՈւրհայեցւոյ, որ հանդիպեցայ եղա՞ճ գիւղն, եւ ըստ կարի անարժանութեան լսում գր(եցի) զսուրբ մատե(անս): Վա՛յ ինձ հազար բերան, որ զանուշս ունիմ եւ զդործս ոչ: Աւ ոտս ձեր անկանիմ, ով սուրբ լուսերամ քահանայք· վասն Աստուծոյ սիրոյն մի ողոքմի ասացէք ինձ եւ հաւրն իմ(ոյ) Աբրահամ իւրիցուն եւ մաւրս իմոյ Մարգարտին եւ կողակցին իմոյ Մարիամին: Եւ մեզ յիշելոցս եւ ձեր յիշողացդ առ հասարակ ողորմեացի Քրիստոս Աստուածն մերոամէն: Հայր մեր որ յե·:

2· Թղ· 90ա· Ով սրբազան զասք սուրբ լուսերամ պաշտօնէիցդ Քրիստոսի, որք ընտրեան Աստուծոյ անդր արժանաւորիք ի սուրբ յատեանն, վասն Աստուծոյ սիրոյն հասմար մեկ բերան լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք ինձ անարժան գրչիս Յովաննէս անարժան իւրիցուս յՈւրհայեցուս, եւ իմ ծնողացն Աբրահամ իւրիցուն եւ մաւրս Մարգարտին եւ ամենայն արեամբ մերձաւորացն իմ: Եւ Աստուած մեզ եւ ձեզ առ հասարակ ողորմեացի ի մխիւանդամ գալստեանն· ամէն:

3· Թղ· 99բ· Ո՛հ զգառնացեալ ոգիս ի մէջ մեղաց ծփեալ· միթէ Տէրն ողորմի ձեր սուրբ աղաւթիւքն· եւ ձեզ մասն լիցի:

4· Թղ· 137բ· Յորժամ որ ընթեռնոյք գսուրբ գիրս, մի Աստուած ողորմի ասացէք վաթսար գրչիս Յովաննէս իւրիցուս...:

(Շարունակելի:)

Հ· Ն· ԱԿԻՆԵԱՆ

## ՅԱԽԵԼՈՒԱԾ ՅԷՋՆ 148

«Պրոտոսպաթար» առաջին անգամ գործածուած կը գտնեմ Սէբէոսի քով· որ կը գրէ յամն 644· կոստանդին կայսր վարագրէ յամն 644· կոստանդին կայսր վարագրէ ոսկրոցն եւ անոր որդին, «առաջին սպաթար ոսկրոցն եւ անոր որդին, «առաջին սպաթարացն եւ զՄարտա, ի մէջ ամենայն սպաթարացն եւ կանտիտատ», որոնք աջորէն կը վերագտանայինն, ընդունեցաւ սիրով (էջ 114): Այս տեղ առաջին սպաթար նոյն է պրոտոսպաթարին հետ, որ այլուր թարգմանուած է «սուպերակիր թագաւորի» (վարք Հարանց, Ա· 635):

## ԳՐՐՉԵԼԻ ԵՒԿԼԻԴԵՍԻ ՏՐԲԵՐՔ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԵՆ

1·

*Քանի տարի առաջ* M. Leroy հրատարակած էր եւկլիդէսի երկրաչափութեան հայերէն թարգմանութիւնը պաւիայի Թ· 178 ձեռագրէն: Որովհետեւ այդ միակ կարծուած ձեռագիրը սկիզբէն պակասաւոր էր իբր 50 տող, կարեւոր համարած էի ընդգիրը միւնաղամ հրատարակել Տիւրինգէնի Համալսարանի Թ· 74 հայերէն ձեռագրէն, որ մասնաւոր պաւիայի օրինակէն դուրս լինած մասն ունէր (Հանդ· Ամս· 1937, էջ 225—242, հանրագիր ուսումնասիրութեամբ):

M. Leroy փութացած էր լսելիներէնի թարգմանել իմ հրատարակութենէն պաւիայի ձեռագրին պակասաւոր մասը (տողք 1—50)· Un nouveau fragment d'Euklide, ի թերթին Revue des études indo-européennes 1 (1938), 39—44: Այս առթիւ անդրադարձած է Մ· Լերուա նաեւ իմ ուսումնասիրութեանս վրայ, ուր ըսած էի, թէ երկրաչափութեան թարգմանիչը Գրիգոր Մագիստրոս չէ, ինչպէս համարած էր Լերուա իր հրատարակութեան ներածութեան մէջ, մոլորելով Մագիստրոսի «սկսայ թարգմանել» տեղիքէն: Եւ այժմ կը զրէ, թէ «մենք կը չարունակենք մնալ մեր գրչ, թէ «մենք կը չարունակենք մնալ մեր յառաջուան կարծիքին վրայ» (էջ 44):

Մն չ'ընդունիր նաեւ թէ վենետիկի Մխիթարեանց Ձեռագրատան մէջ գտնուին Մխիթարեանց Ձեռագրատան մէջ գտնուին Եւկլիդեայ օրինակ մը, այլ պատճառաբանութեամբ, որ Հ· Գ· Զարբհանալեան պատ չէ յիշատակած:

Եթէ կարելի է ներել թարգմանչի մասին իր արտայայտութիւնը, որուն պիտի անդրադառնամ քիչ յետոյ, բայց կը համարիմ թէ անհրաժ է իր մեծութեամբ երկրորդ կէտի մասին, քանի որ ցոյց տուած էի ձեռագիրը (Բ· Օրինակ Յովհ· Դամասկացւոյ գրութեանց) եւ նոր Հայկազեան Բառգիրքը, ուր յառաջ բերուած էին, ա՛յս ձեռագրէն, այլ եւ այլ կոչումներ, թուով 16, ընդ ամէնը իբր 63 տող, որոնցմէ 7 վկայութիւնք (25 տող) առաջին մասէն:

Այժմ կարող եմ ասել, թէ գտնուած է երկրաչափութեանս չորրորդ օրինակ մ'ալ· ուսի

© National Library of Armenia